

ՉԵՐԲԱՎԱԼՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Արման ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ քրեական դատավարության և

կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

Իրավական պետության կառուցման ճանապարհին Հայաստանի Հանրապետությունը միաժամանակ որդեգրեց այն հանրաճանաչ սկզբունքները, որոնք ապահովում են մարդու իրավունքների և օրինական շահերի իրականացումն ու պաշտպանությունն անհիմն սահմանափակումներից և ոտնձգություններից: Ակնհայտ է, որ մեր երկրում իրականացվող դատաիրավական բարեփոխումները միտված են ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը, որոնք պահանջում են ամրապնդել և ընդլայնել անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները¹:

2001 թվականի հունվարին Հայաստանի Հանրապետությունը դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ և 2002 թվականի մարտի 20-ին վավերացնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան և, դրանով իսկ միանալով մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական համակարգին, ստանձնեց ոչ միայն Կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության, այլև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավագործության ճանաչման պարտավորությունը²:

Ինչպես երևում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերլուծությունից և դրա կիրառման պրակտիկայից, դրա նպատակն է պաշտպանել անձին կամայական ձերբակալումից: Այսպես, ըստ 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի՝ ձերբակալումը կա-

րող է իրականացվել հետևյալ հիմքերից մեկի առկայության դեպքում՝

ա) իրավախախտում կատարելը,

բ) իրավախախտման կատարումը կանխելը,

գ) իրավախախտում կատարած անձի թաքնվելը կանխելը:

Այս բոլոր երեք հիմքերի հիման վրա կատարված ձերբակալումը պետք է հետապնդի որոշակի նպատակ, այն է՝ անձին իրավասու մարմնի առջև կանգնեցնելը:

Դ. Ավետիսյանը գրում է. «ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը՝ իրավունքի գերակայության սկզբունքը, պահանջում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված անձի ազատության իրավունքի նկատմամբ գործադիր իշխանության հնարավոր ոտնձգությունները երկրի ներպետական օրենսդրության համապատասխան լինեն դատական վերահսկողության օբյեկտ³: Սրանով է թերևս պայմանավորված այն հանգամանքը, որ խոսելով կոնվենցիայի և ՀՀ օրենսդրության համապատասխանության մասին, տեսաբան և պրակտիկ իրավաբանները իրավացիորեն նկատում են, որ ՀՀ օրենսդրությունն այս առումով որոշ հիմնախնդիրներ ունի, քանզի վարույթն իրականացնող մարմինը ոչ միայն պարտավոր չէ ձերբակալվածին տանել դատարան, այլև ձերբակալվածի դատական բողոքարկելու իրավունքը համապատասխան մեխանիզմների բացակայության պատճառով չի իրագործվում»⁴:

Բացի Եվրոպական կոնվենցիայից, անձին ձերբակալման հետևանքով ազատությունից զրկելը դատական վերահսկողության օբյեկտ դարձնելու պահանջ է պարունակում նաև 1991 թվականի ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության կողմից

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

վավերացված՝ «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների պաշտպանության մասին» դաշնագիրը, որի 9-րդ հոդվածը սահմանում է, որ՝ յուրաքանչյուր ոք, ով գրկվել է ազատությունից ձերբակալման կամ կալանավորման հիմքով, իրավունք ունի իր գործը դատական կարգով քննելու, որպեսզի դատարանը անհապաղ որոշում կայացնի ազատությունից գրկելու օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ և ազատ արձակի, եթե ձերբակալումն անօրինական է:

Դատական վերահսկողությունը իրենից ներկայացնում է անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության յուրահատուկ միջոց, որը ի տարբերություն դատախազական հսկողության և զերատեսչական վերահսկողության, ունի մի շարք առավելություններ: Մասնավորապես, դատարանի ու դատավորի կարգավիճակը և նրանց գործառույթները կապված չեն մինչդատական վարույթի որակի հետ, չեն ենթադրում պատասխանատվություն հանցավորության դեմ պայքարի և հանցագործությունների բացահայտման համար⁶: Բացի այս, դատական վերահսկողությունը համարվում է քրեական հետապնդման մարմիններից զսպող գործոն և ապահովում խախտված իրավունքների արագ և արդյունավետ վերականգնման հնարավորություն: Մի խոսքով, դատական վերահսկողության ինստիտուտը անհատի շահերի պաշտպանությունն ապահովող գործուն միջոց է⁷:

Նկատենք, որ դատարանի **անկախությանց, անաչառությանն ու անկողմնակալությանը** անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Ըստ Դ. Ավետիսյանի՝ «Կոնվենցիայի ընդունման սկզբնական շրջանում շատերը, անկասկած, մտածում էին, որ 5-րդ հոդվածում հիշատակվող **«օրենքով լիազորված՝ դատական գործառույթներ իրականացնող**

պաշտոնատար անձը» կարող է լինել դատախազը: Ավելին, ըստ հեղինակի՝ եվրոպական մի շարք երկրներում ջանքեր են գործադրել, որ դատախազի պաշտոնը համապատասխանի 5-րդ հոդված 3-րդ կետի պահանջներին, այսինքն՝ դատախազը լինի «դատական գործառույթներ իրականացնելու համար լիազորված անձ»⁷: Սա էլ, մեր կարծիքով, հանդիսացել է այն պատճառը, որը ստիպել է հանձնաժողովին և եվրոպական դատարանին առանձնացնել այն հիմնական չափանիշները, որոնք ներկայացվում են նշված պաշտոնատար անձին: Այդպիսի պահանջներից են անկախությունը գործադիր մարմնից և կողմերից անձամբ ձերբակալվածին լսել, օրենքով նրա վրա դրված պարտականությունը, մեկ անձի մեջ դատական և մեղադրական գործառույթների միավորման անթույլատրելիությունը⁸:

Այսպես, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում է թույլ տրվել *Բրիտկատն ընդդեմ Իտալիայի* գործում⁹, ըստ որի մեղադրյալի կալանավորման մասին որոշումը հաստատվել էր դատախազի կողմից, որը հետագայում հանգել էր այն հետևության, որ այդ գործը տարածքային ընդդատությամբ իր իրավասության տակ չէ, և այն փոխանցել էր այլ շրջանի դատախազին: Դատարանը նշել է, որ առաջին դատախազի անաչառության մասին կասկածները հիմնավորվել են, քանի որ երբ նա հաստատել է կալանավորման մասին որոշումը, օբյեկտիվորեն ենթադրվում էր, որ կարող էր միջամտել հետագա դատաքննությանը, և էական չի եղել, որ գործն իր վարույթում չէ: Դատախազը՝ որպես մեղադրանքի կողմի սուբյեկտ, պատահական հանդես չի եկել: Այսպիսի խախտում է թույլ տրվել նաև Ասենովն ընդդեմ Բուլղարիայի գործով, որտեղ դիմողը բերվել է քննիչի մոտ, որն էլ նրան հարցաքննել է, պաշտոնապես մեղադրանք առաջադրել և նրան կալանավորելու մասին որոշում կայացրել: Քննիչի որոշումը հավանության է արժանացել մեկ դատախազի կողմից, իսկ մյուս

դատախազները կայացրել էին կալանավորման ժամկետի երկարացման մասին որոշում: Դատարանը վճռել էր, քանի որ այդ դատախազներից յուրաքանչյուրը կարող էր հետագայում դատաքննության ժամանակ հանդես գալ ընդդեմ դիմողի, նրանք բավականաչափ անկախ և անաչառ չէին 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակների համար¹⁰:

Վերոնշյալից էլ հետևում է, որ ձերբակալման յուրաքանչյուր ակտ պետք է դառնա դատական վերահսկողության օբյեկտ, քանի որ դատական վերահսկողությունը ըստ էության հանդիսանում է ոչ միայն անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ երաշխիք, այլև մինչդատական վարույթում անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող նորմերի կիրառման գործունեության օրգանական մասն է կազմում: Այս առումով պատկերավոր և հիմնավորված է Վ.Յու. Մելնիկովի այն պնդումը, թե մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը առանձնահատուկ դատավարական գործունեություն է՝ ուղղված քրեական դատավարությունում անձի իրավունքների և օրինական շահերի իրականացումն ապահովելուն և բացառելու ոչ միայն այդ իրավունքների անհիմն սահմանափակումները և խախտումները, այլև վերականգնելու այդ իրավունքների անհիմն և անօրինական սահմանափակումները կամ խախտումները¹¹: Փաստորեն, բողոքի լուծմանը նվիրված դատական նիստերը մինչդատական վարույթ են ներմուծում արդարադատության տարրեր, իսկ եթե օրենքում նշվի, որ այդ բողոքը պետք է քննվի և լուծվի կողմերի պարտադիր մասնակցությամբ (այլ ոչ թե թողնվի դատարանի հայեցողությանը /ՀՀ քր. դատ. օր-ի 290-րդ հոդված/) և դատական նիստի կարգը պահպանելով, ապա նաև՝ մրցակցություն, որը միջնորդությունը, բողոքը արդարացիորեն քննելու և լուծելու լրացուցիչ երաշխիք է: Փաստորեն, դատական վե-

րահսկողությունը ենթադրում է դատարանից պահանջել, որպեսզի այն կայացնի հիմնավորված և օրինական որոշումներ, որոնցով ոչ միայն կվերականգնվեն արդեն իսկ խախտված իրավունքները, այլև կկանխվեն անձի իրավունքների հնարավոր անհարկի սահմանափակումները:

Այսպիսով, յուրաքանչյուր ոք, ում սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակվել են քննիչի, հետաքննության մարմնի կամ դատախազի կողմից, պետք է օժտված լինի այդ մարմնի գործողությունները և որոշումները անմիջականորեն դատարան բողոքարկելու իրավունքով, կամ, ինչպես իրավագիտորեն նշում է Վ.Յու. Մելնիկովը, անձի անձեռնմխելիության և ազատության սահմանափակման յուրաքանչյուր ակտի, այդ թվում օրենքով սահմանված հիմքերով և կարգով իրականացված, պետք է հակադրվի դատական բողոքարկման իրավունքը¹²:

Խոսելով հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի գործողությունները և որոշումները դատական կարգով բողոքարկելու կասկածյալի իրավունքի մասին, նկատենք, որ դրա կարևորությունը բազմիցս նշվել է տեսաբան դատավարագետների կողմից¹³, սակայն այդ հարցը ՀՀ-ի համար հրատապ և հայեցակարգային դարձավ, երբ Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական Կոնվենցիան և Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագիրը, որոնք ըստ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ոչ միայն համարվում են ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը, այլև ներպետական օրենսդրության նկատմամբ ունեն գերակայություն, ուստիև միջազգային պայմանագրերի և ՀՀ օրենսդրության դրույթների միջև հակասության դեպքում պետք է կիրառվեն միջազգային պայմանագրերի նորմերը:

Նկատենք, որ չնայած օրենսդրությունը կասկածյալին քրեական հետապնդման

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

մարմինների գործողությունները և որոշումները դատական կարգով բողոքարկելու իրավունք և հնարավորություն է նախատեսում, սակայն, ըստ որոշ ուսումնասիրությունների¹⁴, պրակտիկայում կասկածյալի կողմից իր այդ իրավունքից օգտվելու դեպքեր գրեթե չեն հանդիպում, որն ունի մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Ըստ Ա.Վ. Սոլտանովիչի՝ այդ նեգատիվ երևույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ հաճախ կասկածյալին չի բացատրվում իր այդ իրավունքի էությունը¹⁵: Ավելին, պրակտիկ իրավաբանների շրջանում անցկացված հարցումները ցույց են տվել, որ երբ խոսքը վերաբերում է քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված կասկածյալի և մեղադրյալի իրավունքների պաշտպանությանը նվիրված դրույթներին, ապա քննիչների և դատախազների մոտ այդ դրույթների նկատմամբ նկատվում է նիհիլիստական վերաբերմունք¹⁶: Այն հարցին, թե *ինչով է պայմանավորված այն իրավիճակը, երբ գործում չկան համապատասխան դատավարական գործողությունը կատարելու համար անհրաժեշտ բավարար հիմքեր, սակայն նրանք կատարում են այդ գործողությունները, դրանով իսկ խախտում անձի իրավունքները և օրինական շահերը*, հարցվողների մեծ մասը պատասխանել է. «*լավ է գնալ օրենքը խախտելու ճանապարհով, քանի որ արդյունքում ձեռք է բերվում ապացույց, ընդ որում արդարանալով նշում են. հաղթողներին չեն դատապարտում*»¹⁷: Փաստորեն, պրակտիկ իրավաբանների մի մասը առաջնորդվում է «նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքով, որն, ըստ էության, խարխլում է քրեական դատավարությունում օրինականության հիմքերը:

Դ. Ավետիսյանը, անդրադառնալով կասկածյալի բողոքարկելու իրավունքին, գրում է. «ճիշտ է քրեադատավարական օ-

րենսդրությունը նախատեսում է ձերբակալման օրինականությունը և հիմնավորվածությունը դատարան բողոքարկելու հնարավորությունը /ՀՀ քր. դատ. օր-ի 63-րդ հոդված, մաս 2-րդ կետ 17 և 290-րդ հոդված մաս 1/, որը, սակայն, օրենսդրությունում անհրաժեշտ մեխանիզմների բացակայության պատճառով կիրառում չի գտնում¹⁸: Կարծում ենք, հեղինակի այս կարծիքը պետք է վերապահումով ընդունել, քանի որ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով նախատեսված կասկածյալի բողոքարկման իրավունքը լրացվում է 103 հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջներով, ըստ որոնց՝ **բողոքները քրեական դատավարությանը մասնակցող անձինք տալիս են կամ անձամբ, կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով, որի գործողությունները կամ որոշումները բողոքարկվում են, իսկ բողոքն ընդունող դատարանը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են անմիջապես, ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում, բողոքն ուղարկել ըստ ենթակայության: Իսկ բողոքն ստացող մարմինն էլ պարտավորվում է այն քննարկել անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալու պահից 3 օրվա ընթացքում**: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ փաստորեն քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է բողոքարկելու իրավունքի իրականացումն ապահովելու մեխանիզմ պաշտոնատար անձանց պարտավորեցնելու և հստակ ժամկետ սահմանելու առումով, սակայն միակ վերապահումով, որ այդ մեխանիզմը կրում է ընդհանրական բնույթ: **Այլ բան է, որ ցանկալի կլինի օրենքում հստակ ամրագրել ձերբակալման բողոքարկման հատուկ ընթացակարգ, ինչը կհանդիսանա անձի իրավունքների ապահովման գործում միջոց և այդ իրավունքի իրականացման լրացուցիչ երաշխիք**:

Նկատենք, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը կարծես ձերբակալման բողոքարկման հատուկ ընթացակարգի

նախադրյալներ ունի, մասնավորապես՝ 2006 թվականի մայիսի 23-ին ընդունված ԶԳ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ԶԳ օրենքով օրենսգիրքը լրացվեց՝ «Կասկածյալի ձերբակալման կարգը» վերտառությամբ 131.1-րդ հոդվածով, որի 1-ին մասում ամրագրված է, որ հանցանքի կատարման մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն..... որում նշվում են կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները ու պարտականությունները պարզաբանելու, ինչպես նաև կասկածյալի հայտարարությունների և միջնորդությունների մասին: Ավելիայն է, որ հիշյալ լրացումը էական առաջընթաց է ի տարբերություն 1998 թվականի՝ ԶԳ քրեական դատավարության օրենսգրքի խմբագրության, սակայն միևնույն ժամանակ այն նույնպես չի կարելի համարել լիարժեք, քանզի պարզ չէ, թե եթե կասկածյալը օգտվի իր բողոքարկելու իրավունքից, ապա ինչպես է դրա իրականացումը ապահովվելու, ինչ ժամկետի ընթացքում և այլն:

Չետևաբար, մեր կարծիքով, ճիշտ կլինի, եթե հենց ձերբակալման մասին արձանագրությունը կազմելիս համապատասխան մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավորվին կասկածյալին բացատրել ոչ միայն նրա իրավունքները, այլև այդ իրավունքների իրականացման ընթացակարգը, որն ամրագրված է քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածում: Միևնույն ժամանակ, որպես լրացուցիչ երաշխիք պետք է սահմանվի, որ կասկածյալն իրավունք ունի ծանոթանալու իր բողոքի արդյունքում դատարան ուղարկվող նյութերին և դատարանում ներկա գտնվելու իր բողոքի քննությանը, ելնելով այն նկատառումներից, որ կասկածյալին հնարավորություն է տրվում հիմնավորելու

իր բողոքը՝ դրանով իսկ ստեղծելով մրցակցություն, ինչի մասին նշեցինք վերևում:

Փաստորեն, անհրաժեշտ է, որպեսզի ձերբակալման կարգը կանոնակարգող 131.1-րդ հոդվածի շրջանակներում նախատեսվի նաև կասկածյալի բողոքարկելու իրավունքի կիրառման ընթացակարգը և ժամկետները: Կարևոր է նշել, որ ընթացակարգը նախատեսելը դեռևս բավարար չէ: Անհրաժեշտ է նաև հստակեցնել, թե՞ դատարանը ինչ հարցեր պետք է պարզաբանի, կամ ինչն է կազմում դատական քննության առարկան: Ինչպես երևում է ԶԳ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածից, դատարան կարող են բողոքարկվել ինչպես քրեական վարույթն իրականացնող մարմինների գործողությունները, այնպես էլ որոշումները, իսկ ըստ 290-րդ հոդվածի՝ դատարանը պետք է ստուգի այդ գործողությունների և որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը:

Այս ընդհանուր «կանոնից» հետևում է, որ ձերբակալման ակտի բողոքարկման դեպքում դատարանը պետք է ստուգի ձերբակալման օրինականությունը և հիմնավորվածությունը: Նկատենք, որ այս հարցի հետ կապված տեսության մեջ միասնական մոտեցում չի ձևավորվել: Որոշ գիտնականներ գտնում են, որ դատարանը պետք է սահմանափակվի միայն «օրինականությունը» ստուգելով, և քանի որ քրեական դատավարությունում օրինականության տակ հասկացվում է օրենքի պահանջների պահպանում և ճիշտ կիրառում¹⁹, ուստի, ըստ հեղինակի՝ «դատարանը պարզելով, որ պահպանվել է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգը՝ բոլոր գործողությունները կատարվել են քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան, որևէ հիմնավորվածության մասին խոսք չի գրվում, քանի որ «հիմնավորվածության» պահանջն իր մեջ պարունակում է «չարիք»:Չա այնպիսի հասկացություն է, որ հնարավորություն է տալիս դրա տակ մտցնել այն ամենը, ինչ ցանկա-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

նաս», - գրում է հեղինակը²⁰: Մյուս խումբը, չհամաձայնելով այս տեսակետի հետ, գրում է. «Հեղինակի այս կարծիքը ՌԴ Քերագույն դատարանի 27.04.93 թվականի որոշման դրույթների սխալ հասկանալու արդյունք է, քանի որ հիշյալ որոշման մեջ նշված է, որ դատարանը, ստուգելով օրինականությունը և հիմնավորվածությունը, չպետք է քննարկի անձին մեղսագրվող հանցանքի կատարման մեջ նրա մեղավորության հարցը, որը հեղինակների իրավացի գնահատմամբ չի նույնանում հանցանքի կատարմանը անձի մասնակցությունը հաստատող ապացույցների ստուգման հետ: Դատարանի կողմից այս կամ այն գործողության կամ որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս անձի մեղավորության հարցի քննարկման արգելքը պայմանավորված է հետազայում՝ դատավճիռ կայացնելիս այդ որոշման «պրեյուդիցիալ» նշանակությունը բացառելու անհրաժեշտությամբ»²¹: Այս առումով ուշագրավ է նաև ՌԴ Սահմանադրական դատարանի 23.03.99 թվականի որոշումը, ըստ որի դատարանը մինչդեռ տական վարույթի ընթացքում այս կամ այն դատավարական ակտի ստուգման ժամանակ չպետք է նախօրոք որոշի այնպիսի հարցեր, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան, քանի որ դա կհակասի Սահմանադրությամբ ամրագրված դատական իշխանության անկախության սկզբունքին (ՌԴ Սահմանադրություն 120-րդ հոդված), որը՝ մրցակցության պայմաններում քրեական գործով օբյեկտիվ և անաչառ արդարադատության իրականացման երաշխիք է համարվում²²:

Այսպիսով, համաձայնելով այն հեղինակների հետ, ովքեր գտնում են, որ հիմնավորվածությունը ստուգելը չի նշանակում քննարկել նաև անձի մեղավորության հարցը, նշենք, որ հիմնավորվածությունը ստուգելը համարվում է անձի ազատութ-

յան և անձեռնմխելիության լրացուցիչ երաշխիք: Դա ոչ թե չարիք է, այլ ընդհակառակը՝ «բարիք է», քանի որ համարվում է ոչ միայն օրինականության չափանիշներից մեկը, այլև այնպիսի գնահատողական հատկանիշների առկայությունը վկայող հանգամանք է, որոնք ուղղակիորեն վկայում են հանցանքի կատարման և հնարավոր ոչ ցանկալի հետևանքների վրա հասնելու մասին: Հիմնավորվածության վերաբերյալ այսպիսի պատկերացումները ուղղակիորեն բխում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ և 129-րդ հոդվածներից, որոնցում սահմանված են ինչպես այն նպատակը, ինչի համար պետք է անձին ձերբակալել, այնպես էլ այն հիմքերը, որոնք վկայում են անձի կողմից հանցանքի կատարման մասին և սահմանում են այն իրավական պայմանները, որոնք պետք է անպայման պահպանվեն, որպեսզի ձերբակալումը համարվի օրինական:

Հարկ ենք համարում նշել, որ ձերբակալման օրինականությունը և հիմնավորվածությունը դատական վերահսկողության առարկա դիտելու հանգամանքը հիմնավորում է նաև եվրոպական դատարանը՝ նշելով, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված այն դրույթը, որ.ազատությունից զրկելը պետք է իրականացվի «օրենքով սահմանված կարգով», այնուհետև ենթակետերից յուրաքանչյուրում /որոնք նախատեսում են դեպքեր, թե երբ է ազատությունից զրկելը թույլատրելի/ օգտագործվող «օրինական» հասկացությունը վերաբերում է և՛ ընթացքին (մեր օրենսդրությամբ օրինականությանը), և՛ բովանդակությանը (մեր օրենսդրությամբ՝ հիմնավորվածությանը)²³:

Այսպիսով, դատական վերահսկողության առարկա պետք է կազմի ձերբակալման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելը, որն էլ իր հերթին ենթադրում է ստուգել և գնահատել, հարուցված է արդյոք քրեական գործ՝ օրենքով

սահմանված կարգով, արդյո՞ք այն պատշաճ սուբյեկտի կողմից ընդունվել է վարույթ, որքանով է անձը օրինական և հիմնավորված դրվել կասկածյալի դատավարական «կարգավիճակի մեջ», արդյո՞ք ժամանակին է անձին հանձնվել համապատասխան գործողությունների և որոշումների պատճենները: Վերջին պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ կասկածյալը իրավունք ունի իմանալու՝ ինչու է կասկածվում, որքանով է հիմնավորված այդ դատավարական հարկադրանքի միջոցը իր նկատմամբ կիրառելը, ունենալ իրական հնարավորություն դատական կարգով վիճարկելու հիշյալ գործողությունների և որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը և այլն:

Փաստորեն, օրինականությունը ստուգելիս դատարանը ըստ էության պետք է ստուգի և գնահատի միայն ձևական կողմը, որն էլ իր հերթին ենթադրում է պարզել, թե որքանով են պահպանվել ձեռքարկման օրենքով սահմանված հիմքերը, իրավական պայմանները և ընդհանրապես ձեռքարկման դատավարական կարգը կանոնակարգող քրեադատավարական նորմերի պահանջները: Ընդ որում, կարևոր է պարզել՝ որքանով են արդարացված ձեռքարկվող մարմինների գործողությունները, որքանով են իրավացի գնահատվել անձին ձեռքարկելու հիմքերը և շարժառիթը, արդյո՞ք ապահովվել է կասկածյալի պաշտպանության իրավունքի իրականացումը, արդյո՞ք այն հանցանքը, որի կատարման մեջ կասկածվելու պատճառով անձը ձեռքարկվել է, նախատեսում է պատիժ՝ կարգապահական գումարտակում պահելու, կալանքի, որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով, ի վերջո արդյո՞ք պահպանվել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու լրացուցիչ այլ պայմաններ, թե ոչ:

Անհրաժեշտ է պարզել նաև այն, թե պահպանվե՞լ են արդյոք դատավարական այս կամ այն փաստաթղթին ներկայացվող պահանջները՝ դատավարական ձևը, օրի-

նակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1-րդ հոդվածում սահմանված է, որ ձեռքարկման մասին արձանագրությունում նշվում է կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին: Բացի այս՝ արձանագրությունում նշվում են նաև այն կազմելու ժամանակը (օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, րոպեն), ձեռքարկման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձեռքարկվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները և այլ հանգամանքներ, ինչպես նաև ձեռքարկվածի հայտարարություններն ու միջնորդությունները: Ուստի պետք է պարզել՝ արդյո՞ք պահպանվել են ձեռքարկման արձանագրությանը ներկայացվող վերոնշյալ պահանջները, թե՛ ոչ:

Նկատենք, որ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «...իր կամ այլ անձանց գործողությունների կամ որոշումների դեմ բողոքն ընդունող դատարանը.....պարտավոր է անմիջապես, ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում....այն ուղարկել ըստ ենթակայության, իսկ ըստ նույն հոդվածի 5-րդ մասի դատավարության մասնակցի բողոքը պետք է անհապաղ քննության առնվի քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից, բայց ոչ ուշ քան այն ստանալու պահից 3 օրվա ընթացքում»: *Կարծում ենք՝ ճիշտ կլինի 103-րդ հոդվածում սահմանված 24 ժամը կրճատվի, և սահմանվի 12 ժամ, իսկ 5-րդ հոդվածում սահմանված 3 օրը նվազեցվի մինչև 12 ժամ:* Սրա կարևորությունը այն է, որ ձեռքարկվումը տևում է 72 ժամ, ուստի եթե լրացել է այդ ժամկետը, ապա, կարծում ենք, ձեռքարկման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու անհրաժեշտությունը ըստ էության կորչում են: Բանն այն է, որ անձը դատարան է դիմում, որպեսզի մինչև

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

72 ժամը լրանալը դատարանը ստուգի արդյո՞ք օրինական և հիմնավորված է ձերբակալումը, թե՛ ոչ, և եթե այն օրինական և հիմնավորված է, ապա անհապաղ ազատ արձակի նրան:

Ելնելով այս նկատառումներից, կարծում ենք, մեր առաջարկած տարբերակը համարվում է անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք:

Հաջորդ հիմնահարցը վերաբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածում սահմանված ձերբակալվածին անհապաղ դատարան տանելու պահանջին: Բանն այն է, որ ըստ Կոնվենցիայի հիշյալ հոդվածի յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման հետևանքով զրկվել է ազատությունից, պետք է տարվի դատարան կամ դատավորի մոտ, որպեսզի վերջինս ստուգի ձերբակալման օրինականությունը և հիմնավորվածությունը:

Ձերբակալվածի հետ միասին դատարան պետք է ներկայացվեն նաև գործի նյութերը:

Փաստորեն, պայմանավորված ՀՀ օրենսդրությունը Կոնվենցիային համապատասխանեցնելու պահանջով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետք է սահմանվի ձերբակալումը դատարանի կողմից սանկցիավորելու դատավարական կարգ: Հետաքրքիրն այն է, որ Կոնվենցիան ՀՀ կողմից վավերացվել է դեռևս 2002 թվականին, Իսկ 2005 թվականին Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ «անտեսվեց» Կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիշյալ պահանջը, ինչը հնարավոր բողոքի դեպքում ՀՀ-ի համար կարող է անդառնալի հետևանքներ առաջացնել, քանի որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետությունները Կոնվենցիայի պահանջների խախտման համար ենթար-

վել են դրամական բարձր տույժերի:

Ինչևէ, նկատենք, որ այս ինստիտուտը նախատեսված է մի շարք արտասահմանյան երկրների օրենսդրությամբ: Այսպես, ըստ Ավստրիայի քրեական դատավարության օրենսգրքի անձին ձերբակալելու համար անհրաժեշտ են ոչ միայն օրենքում սահմանված հիմքերը և պայմանները, այլև դատարանի գրավոր կարգադրությունը: Առանց այդպիսի կարգադրության կարճաժամկետ ազատությունից զրկում կարող են իրականացնել միայն անվտանգության մարմինները և միայն հանցանքի կատարման վայրում անձին անմիջապես բռնելիս, և միայն այն մտավախությամբ, որ անձը կարող է դիմել փախուստի կամ կատարել նոր հանցանք: Այս դեպքում անձը 48 ժամվա ընթացքում պետք է տարվի դատարան, որն էլ բերելուց հետո 24 ժամվա ընթացքում և յուրաքանչյուր դեպքում ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում՝ փաստացի բռնելու պահից պետք է հարցաքննի կասկածյալին, որից հետո պետք է կայացվի հետևյալ որոշումներից մեկը՝ կամ կասկածյալին ազատ արձակելու մասին, կամ նախնական կալանքի վերցնելու մասին²⁴: Ըստ ԱՄՆ-ի քրեական դատավարության օրենսդրության ընդհանուր կանոնի՝ կասկածյալին արգելանքի վերցնելու համար ոստիկանությունը պետք է հավաքի անհրաժեշտ տվյալներ և կոնկրետ անձին կալանքի վերցնելու միջնորդությամբ դիմի դատարան: Իսկ անհետաձգելի դեպքերում թույլատրվում է անձին վերցնել արգելանքի առանց դատարանի կարգադրության, սակայն պայմանով, որ դրանից անմիջապես հետո ձերբակալվածը պետք է որքան հնարավոր է արագ տարվի դատարան ձերբակալման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու համար²⁵: Նկատենք, որ այսպիսի ընթացակարգ է նախատեսված նաև մի շարք սոցիալիստական երկրների օրենսդրությամբ: Այսպես, Կուբայի օրենսդրությամբ թույլատրվում է անձին ձերբակալված պահել 24 ժամ, որից հետո անհրաժեշտ է դատախազի սանկցիան: Բացի այս Կուբայում գործում է նաև «հաբես կորպուս» ինստիտուտը, ըստ որի ձերբակալ-

վածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է անձին տանել դատարան, եթե նա պահանջում է այդ²⁶:

Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Լիտվայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում սահմանված ընթացակարգը: Այսպես, ըստ Լիտվայի քրեական դատավարության օրենսգրքի 50-1 հոդվածի՝ «եթե կան բավարար հիմքեր կասկածելու, որ անձը կարող է կատարել վտանգավոր արարք, որի հատկանիշները նախատեսված են Լիտվայի քրեական օրենսգրքի 75-րդ /բանդիտիզմ/, 227-1 -րդ /հանցավոր խմբավորում/ և 227-2-րդ /անձի դեմ ահաբեկչություն/ հոդվածներով, և նման արարքը կանխելու համար ոստիկանապետը...կարող է հիմնավորված որոշմամբ դատախազի թույլտվությամբ կարգադրել անձի ձերբակալում...»: Համայնքային դատարանի նախագահը, մարզային դատարանի դատավորը կամ մարզային դատարանի պալատի նախագահը ձերբակալման որոշումը կայացրած ոստիկանապետի և ձերբակալման թույլտվություն տված դատախազի մասնակցությամբ 48 ժամվա ընթացքում որոշում է ձերբակալման օրինականության հարցը: Դատավորը ձերբակալման օրինականության հարցը որոշելիս կարող է իր նախաձեռնությամբ ապահովել նաև ձերբակալված անձի ներկայությունը, սակայն դատավորը կարող է նաև որոշումը կայացնել վերջինիս բացակայությամբ:

Ինչևէ, չանդրադառնալով տարբեր երկրներում առկա հիշյալ ինստիտուտի առանձնահատկությունների քննարկմանը, նշենք, որ դրանցից յուրաքանչյուրը բնորոշ է տվյալ երկրի իրավական համակարգի առանձնահատկություններին, սակայն կարևորն այն է, որ ձերբակալումը՝ որպես անձի ազատությունը սահմանափակող խիստ հարկադրանքի միջոց, համարվում է դատական վերահսկողության օբյեկտ:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, կարող ենք հավաստել, որ ՀՀ օրենսդրությունը, այդ թվում՝ Սահմանադրությունը, միջազգային չափանիշներին և հատկապես Եվրոպական Կոնվենցիային և

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների պաշտպանության մասին դաշնագրին համապատասխանեցնելու առումով անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ նախատեսել ձերբակալվածին դատարան տանելու ինստիտուտ և ձերբակալվածի կողմից ձերբակալման օրինականությունը և հիմնավորվածությունը դատարան բողոքարկելու հստակ մեխանիզմ:

ՀՀ օրենսդրությունը պետք է բովանդակի, որ ձերբակալվածը 72 ժամվա ընթացքում պետք է տարվի դատարան, որի նպատակը ձերբակալման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումն է, ինչպես նաև անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելը: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել ձերբակալվածի ներկայությունը դատարանում, նա պետք է իրավունք ունենա օգտվել պաշտպանի ծառայություններից: Պաշտպանը պետք է հնարավորություն ունենա մյուս կողմի հետ հավասար մասնակցելու ձերբակալման օրինականության և հիմնավորվածության ստուգմանը, տեսակցելու ձերբակալվածի հետ, հարուցելու միջնորդություններ, ներկայացնելու նյութեր, ծանոթանալու ձերբակալման որոշմանը և այն հիմնավորող նյութերին կամ ապացույցներին: Դրա հետ մեկտեղ դատարանին անհրաժեշտ է օժտել կասկածանքի հիմքում ընկած ապացույցների նախնական ստուգման իրավունքով:

Ձերբակալման օրինականության և հիմնավորվածության ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ երկու որոշումներից մեկը.

1. ձերբակալումը օրինական ճանաչելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին,

2. անձին ազատ արձակելու մասին:

Սրանով կստեղծվի ձերբակալվածի իրավունքների պաշտպանության երկակի երաշխիք, և միաժամանակ կլուծվի ձերբակալման մասով ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու հիմնահարցը:

Քրեական իրավունք եւ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

- ¹ Տե՛ս Հանցավորության դեմ պայքարը և մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնախնդիրները, Գ.Ս. Ղազիսյանի խմբագրությամբ, Երևան, 2004, էջ 123:
- ² Տե՛ս 2002 թվականի ապրիլի 26-ին Հայաստար Հանրապետությունը Կոնվենցիայի վավերացման վերաբերյալ վավերագիրն ի պահ է հանձնել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին և Կոնվենցիայի 59-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա այդ պահից այն ՀՀ համար ուժի մեջ է մտել, և Եվրոպական դատարանն իրավասու է դարձել քննելու Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով պաշտպանվող իրավունքների ու ազատությունների՝ Հայաստանի կողմից ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքները:
- ³ Ավետիսյան Դ.Ջ. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ Եվրոպական Դատարանի և ՀՀ օրենսդրության հիմնարար մոտեցումներն ու այդ իրավունքի զարգացման ժամանակակից միտումները, Երևան 2004, էջ 125:
- ⁴ Տե՛ս Դիլբանդյան Ս. ՀՀ քրեական դատավարության օրենսդրության համապատասխանությունը Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 13-րդ հոդվածներին և 7-րդ արձանագրության 2-րդ, 3-րդ, 4-րդ հոդվածներին. Երևան 2004, էջեր 38-40 և այլն:
- ⁵ Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, հատուկ մաս, Երևան 2003, էջեր 228-229:
- ⁶ Տե՛ս Ղազիսյան Գ.Ս. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան 2001, էջեր 282-284:
- ⁷ Տե՛ս Ավետիսյան Դ. Ազվ. աշխ. էջ 85:
- ⁸ Տե՛ս Դիլբանդյան Ս. Ազվ. աշխ. էջ 35:
- ⁹ Տե՛ս Բրիկկատն ընդդեմ Իտալիայի, 26 նոյեմբերի 1992թ.:
- ¹⁰ Տե՛ս Ասենովն ընդդեմ Բուլղարիայի, 28 հոկտեմբերի 1998թ.:
- ¹¹ Տե՛ս Мельников В.Ю. Обеспечение прав граждан в ходе досудебного производства. М., 2006, էջ 90:
- ¹² Տե՛ս նույն տեղում:
- ¹³ Տե՛ս Галкин И.С., Кочетков В.Г. Процессуальное положение подозреваемого. М., 1968, էջ 37-38:
- ¹⁴ Տե՛ս Մելնիկով Վ.Յու. Ազվ. աշխ. էջ 91:
- ¹⁵ Տե՛ս Солтанович А.В. Право подозреваемого на защиту в уголовном процессе Республики Беларусь. Минск, 1992, էջ 136:
- ¹⁶ Տե՛ս Соловьев А., Парфенова М., Правосознание прокуроров и следователей как важное условие обеспечения прав участников судопроизводства// Իրավագիտության հարցեր 2-3 2003, էջեր 19-22:
- ¹⁷ Տե՛ս Парфенова М., Соблюдение прав подозреваемых и обвиняемых в стадиях уголовного судопроизводства России в оценке прокуроров // Իրավագիտության հարցեր 1/2003, էջեր 40-43:
- ¹⁸ Տե՛ս Ավետիսյան Դ. Ազվ. աշխ. էջեր 125-126:
- ¹⁹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, ընդհանուր մաս, ԵՊՀ իրատարակչություն, Երևան, 2000, էջեր 125-128:
- ²⁰ Տե՛ս Жданов А. Законность или обоснованность.// Рос. Юстиция 1999/1, էջ 48:
- ²¹ Տե՛ս Грузд Б., Сайкин Л. Законность и обоснованность ареста.// Рос. Юстиция 1999/12, էջ 43:
- ²² Տե՛ս Постановление Конституционного суда РФ "По делу о проверке конституционности положений ст. 133, ч. 1, ст. 218, ст. 220 УПК РСФСР в связи с жалобами граждан В.К. Борисова, Б.А. Кехмана, В.И. Монастырецкого, Д.И. Фуфлигина и общества с ограниченной ответственностью "Моноком":
- ²³ Տե՛ս Ավետիսյան Դ.Ջ. Ազված աշխատությունը, էջ 14:
- ²⁴ Տե՛ս Бутов В.Н. Уголовный процесс Австрии. Красноярск, 1988, էջ 41, 87:
- ²⁵ Տե՛ս Гуценко Д.Ф. Основы уголовного процесса США. М., 1993, էջ 41:
- ²⁶ Տե՛ս Уголовный процесс в европейских социалистических государствах. М., 1978:

ПРОБЛЕМЫ СУДЕБНОГО КОНТРОЛЯ НАД ЗАКОННОСТЬЮ И ОБОСНОВАННОСТЬЮ ЗАДЕРЖАНИЯ

Арман САРГСЯН

Соискатель кафедры Уголовного процесса и криминалистики ЕГУ

Судебный контроль на стадии предварительного расследования — это отличительная черта уголовного судопроизводства во многих демократических государствах. Благодаря ему уже на стадии предварительного расследования имеется возможность у стороны защиты достаточно эффективно отстаивать свои права и свободы, а также реализовывать свои законные интересы.

С целью привести законодательство РА, в том числе и Конституцию, в соответствие с международными стандартами и особенно с Европейской Конвенцией и Договором о защите политических и гражданских прав, необходимо в законодательстве РА предусмотреть институт доставки задержанного в суд и четкий механизм судебного обжалования законности и обоснованности задержания со стороны задержанного.

Законодательство РА должно содержать положение о том, что задержанный в течение 72 часов должен быть доставлен в суд, целью чего является судебная

проверка законности и обоснованности задержания, а также избрание ареста как меры пресечения. Орган, осуществляющий производство, обязан обеспечить присутствие задержанного в суде, он должен иметь право пользоваться услугами адвоката. Адвокат должен иметь возможность наравне с противной стороной участвовать в проверке законности и обоснованности задержания, видеться с задержанным, возбуждать ходатайства, представлять материалы, знакомиться с решением о задержании и с иными обосновывающими его материалами или доказательствами. Вместе с тем необходимо наделить суд правом предварительной проверки доказательств, лежащих в основе подозрения.

В результате проверки законности и обоснованности задержания суд выносит одно из двух решений:

- 1) о признании задержания законным и избрании ареста в качестве меры пресечения,
- 2) об освобождении лица.

Этим будет создана двойная гарантия защиты прав задержанного и одновременно проблема соответствия законодательства РА в части задержания международным критериям.